

**ՀՀ ԲՈԿ-ի Երևանի պետական համալսարանում
գործող իրավագիտության
001 մասնագիտական խորհրդին
(հասցե՝ 0025, Հայաստանի Հանրապետություն,
ք. Երևան, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 1)**

Կ Ա Ր Ծ Ի Ք

Լիլիթ Հովհաննեսի Պետրոսյանի «Ex officio» (գործի ի պաշտոնե քննության) սկզբունքի իրացումը վարչական դատավարությունում» վերտառությամբ ԺԲ.00.04 «Դատական իրավունք՝ դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Լիլիթ Հովհաննեսի Պետրոսյանի՝ «Ex officio» (գործի ի պաշտոնե քննության) սկզբունքի իրացումը վարչական դատավարությունում» վերտառությամբ ատենախոսության թեման արդիական է, այն նվիրված է գիտագործնական արժեք ունեցող այնպիսի հիմնահարցերի համակողմանի հետազոտությանը և վերլուծությանը, ինչպիսիք են՝ «ex officio» սկզբունքի հասկացությունը, «ex officio» սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունները, «ex officio» սկզբունքի իրացման առնչությամբ դատական պրակտիկայում առաջացած խնդիրները, «ex officio» սկզբունքի իրացման առանձնահատկությունները վերաքննության և վճռաբեկության փուլերում:

Ընտրված թեմայի արդիականությունը պայմանավորված է պետական մարմինների և պաշտոնատար անձանց որոշումների, գործողությունների կամ անգործության հետևանքով խախտված իրավունքների վերականգնման պատշաճ կառուցակարգերի

երաշխավորման հրամայականով: Այս հարցի կարևորությունը ընդգծվում է նաև Սահմանադրության 50-րդ հոդվածով ամրագրված պատշաճ վարչարարության իրավունքի երաշխավորման անհրաժեշտությամբ, որը պահանջում է Վարչական դատարանի կողմից վարչական ակտերի և վարչական մարմինների գործողությունների (անգործության) վերանայման մատչելի և արդյունավետ համակարգի ներդնում:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև հայրենական իրավաբանական գրականության շրջանակներում խնդրո թեմային վերաբերելի համընդգրկուն ուսումնասիրության բացակայությամբ, գործնականում առկա խնդիրներով, օրենսդրական անհստակություններով ու բացերով, ինչպես նաև «ex officio» սկզբունքին առնչվող հարցերի վերաբերյալ իրավակիրառ պրակտիկայում ձևավորված հակասական մեկնաբանություններով:

Մասնավորապես, ՎԴՕ-ն չի պարունակում «ex officio» (գործի ի պաշտոնե քննության) սկզբունքի հասկացությանը, բովանդակությանը, կիրառման ծավալներին ու շրջանակին, դրանց իրացմանը վերաբերող մանրամասն կարգավորումներ, ինչի հետևանքով այս սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունների կազմի, դրանց իրականացման կարգի և ծավալների, վերաքննության և վճռաբեկության փուլերում այս սկզբունքի դրսևորման վերաբերյալ առկա չէ միասնական դատական պրակտիկա:

Վերոնշյալ խնդիրները պահանջում են խնդրո առարկա ինստիտուտը հետազոտել գիտագործնական նոր դիտանկյունից:

Աշխատանքն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ կատարված հետազոտությունն ինքնատիպ է և ամբողջական: Ատենախոսության հեղինակը լիովին գիտակցել է խնդրո առարկայի հետազոտման կարևորությունը, կատարել է համապարփակ և խորը գիտական ուսումնասիրություն՝ ներկայացնելով հիմնավոր և արժեքավոր եզրահանգումներ և առաջարկներ: Կարծում ենք՝ հեղինակին հաջողվել է հետազոտության նյութ դարձնել ընտրված թեմային անմիջականորեն առնչվող առավել արդիական հարցադրումները և առաջադրել դրանց լուծումներ:

Ատենախոսությունում հեղինակը ցուցաբերել է հետազոտություն կատարելու, տեսական աղբյուրներից և գործնական նյութերից օգտվելու համարժեք ընդունակություններ: Ատենախոսությունն առանձնանում է ինչպես թեմային առնչվող նյութի համապարփակությամբ, այնպես էլ՝ հեղինակի բարձր իրազեկվածությամբ:

Ատենախոսության արժանիքներից ցանկանում ենք ընդգծել նաև այն, որ աշխատանքում հեղինակը ներկայացրել է ոչ միայն արծարծվող խնդրահարույց հարցերի վերաբերյալ այլ երկրների իրավական կարգավորումները, այլև դատական պրակտիկան, որպիսի հանգամանքը էապես նպաստել է ատենախոսական հետազոտության նպատակին հասնելուն և արժեքավոր առաջարկություններով հանդես գալուն:

Ատենախոսության շրջանակում հեղինակը վերլուծել և վեր է հանել նաև ներպետական դատական ատյաններում խնդրո թեմային վերաբերելի վարչական գործերի քննության արդյունքում արձանագրված խնդիրները, ինչպես նաև՝ Բարձրագույն դատական խորհրդից և Վարչական դատարանից ստացված վիճակագրական տվյալների և պրակտիկայի հիման վրա ներկայացրել է ապացուցահեն և արժեքավոր առաջարկներ:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված թվով յոթ գիտական հոդվածներում, որոնք հրապարակվել են ՀՀ ԲՈԿ-ի կողմից երաշխավորված գիտական ամսագրերում և ժողովածուներում:

Ատենախոսությունը ծավալային և ձևավորման տեսանկյունից կազմված է սահմանված չափանիշներին համապատասխան, գրված է ընդունելի գիտական ու հստակ լեզվաոճով: Ատենախոսության կառուցվածքը նույնպես հաջողված է, իսկ ընտրված հարցադրումների շրջանակը հնարավորություն է տվել ապահովելու նաև նյութի ամբողջականությունը և եզրահանգումների հիմնավորվածությունը:

Ատենախոսության արժանիքներից են նաև հեղինակի կողմից պաշտպանության ներկայացվող դրույթները, որոնք, ըստ էության, միտված են իրավաստեղծ գործունեության ոլորտում օրենսդրության բացերը, թերություններն ու հակասությունները վերացնելուն:

Վերոնշյալով հանդերձ՝ ցանկանում ենք նշել, որ ատենախոսության մեջ տեղ գտած առանձին մոտեցումներ մեզ համար կամ տարակարծության առարկա են, կամ էլ լրացուցիչ հիմնավորման կարիք ունեն: Ըստ այդմ, կցանկանայինք ատենախոսի ուշադրությունը հրավիրել ներքոնշյալ մի քանի դիտարկումների վրա.

1. Հեղինակը, պաշտպանության ներկայացվող դրույթներում անդրադառնալով Վարչական դատարանի կողմից վարչական ակտի իրավաչափության գնահատման հարցին, նշել է, որ այն դեպքում, երբ վարչական ակտը անվավեր ճանաչելու պահանջի հիմքում դրվել են միայն վարչական ակտի անվավեր ճանաչման մեկ հիմքին վերաբերող փաստեր, ապա Վարչական դատարանը «ex officio» սկզբունքի ուժով պետք է անդրադառնա մյուս հիմքերին, եթե **վարչական վարույթի նյութերից** բխում է նման հիմքի առկայությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված **վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում** և դրա ընդունման պահի դրությամբ գործող օրենքների հիման վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ հետագայում ընդունվել է դատավարության մասնակից հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վերաբերող՝ նրանց համար ավելի բարենպաստ օրենք, և եթե դա նախատեսված է այդ օրենքով:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր 01.12.2020թ. թիվ ՍԴՈ-1565 որոշմամբ եզրահանգել է, որ. «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ «Վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում» դրույթը, **նոր ապացույց ներկայացնելու առումով, կաշկանդում է միայն վիճարկվող ակտը կայացրած վարչական մարմնին**»:

Նման պայմաններում, լրացուցիչ պարզաբանման կարիք ունի այն հարցը, թե ինչու է ատենախոսության հեղինակն իր կողմից պաշտպանության ներկայացված համապատասխան դրույթում սահմանափակվել միայն վարչական վարույթի նյութերով, այլ ոչ թե օրինակ՝ վարչական վարույթի նյութերով և վարչական մարմին չհանդիսացող կողմի կողմից ներկայացված այլ լրացուցիչ ապացույցներով:

2. Հեղինակը, անդրադառնալով ոչ պատշաճ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինել առաջարկելու Վարչական դատարանի ex officio լիազորությանը, ի թիվս այլնի, առաջարկել է, որ ոչ պատշաճ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու անհրաժեշտության հիմքով հայցադիմումը վերադարձնելու պարագայում, սխալները չշտկելու դեպքում վարչական դատարանը կարող է մերժել հայցադիմումի ընդունումը ՎԴՕ 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի ուժով, եթե հայցատեսակի փոփոխության հետ կապված թերության չվերացումն արգելք է գործի քննության համար:

Համաձայնելով նշված առաջարկին՝ կարծում ենք, որ բաց է մնում այն հարցը, թե ինչպես պետք է վարվի դատարանը այն դեպքում, երբ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում է ներկայացվում ոչ պատշաճ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու առաջարկություն, և անձը չի ընդունում նշված առաջարկը:

Նշված հարցադրումը հատկապես արդիական է այն պայմաններում, երբ ներկայումս Վարչական դատարանում այս առնչությամբ ձևավորվել է հակասական պրակտիկա. մի դեպքում՝ գործի վարույթը կարճվում է, մյուս դեպքում շարունակվում է գործի քննությունը, և արդյունքում ներկայացված հայցը մերժվում է:

3. Ատենախոսության մեջ հեղինակը բացահայտել է վարչական դատավարությունում ապացույց պահանջելու մասին որոշման հետ կապված հիմնախնդիրները և դրանց առնչությամբ ձևակերպել պաշտպանության ներկայացվող դրույթ:

Ավելին, ատենախոսության մեջ նշվել է, որ ապացույց պահանջելու մասին որո-

շումը հաճախ կատարվում է դատաքննությունը ավարտելուց հետո, որի պատճառով վարչական դատարանը շատ հաճախ վերսկսում է գործի քննությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը, դատաքննության ավարտից հետո անհրաժեշտ համարելով լրացուցիչ հետազոտել ապացույցները կամ շարունակել գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների պարզումը, վերսկսում է գործի քննությունը, որի մասին կայացնում է որոշում:

Ընդ որում, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե դատական վիճաբանությունների ժամանակ վարչական դատարանն անհրաժեշտ է համարում գործի համար նշանակություն ունեցող նոր հանգամանքներ պարզել կամ նոր ապացույցներ ձեռք բերել կամ հետազոտել, ապա նա որոշում է կայացնում գործի դատաքննությունն այդ մասով վերսկսելու մասին:

Թեև հեղինակը մի փոքր անդրադարձել է նշված կարգավորումներին, սակայն ատենախոսությունը առավել կշահեր, եթե հեղինակը անդրադառնար վարչական դատարանի կողմից ապացույց պահանջելու մասին որոշման կայացմանը՝ նաև որպես գործի դատաքննությունը վերսկսելու հիմք՝ քննարկելով դրա նպատակահարմարությունը:

Վերոնշված դիտողություններն այնուամենայնիվ առնչվում են հիմնականում գիտական բանավեճի շրջանակներին և չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժանիքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Լիլիթ Հովհաննեսի Պետրոսյանի հեղինակած ««Ex officio» (գործի ի պաշտոնե քննության) սկզբունքի իրացումը վարչական դատավարությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 08.08.1997թ. -ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.

